— Իմանում եմ: Բայց ի՞նչ է անում հայրիկը, երբ Ծովիկը այդպիսի սուտեր է հնարում:

— Բարկանում է, պատոիրում է, որ ինձ պարտէզը չթողնեն, որ միրգ ուտեմ:

— Հայրիկին կասեմ, որ չբարկանայ. դու խելացի տղայ ես, կասեմ, որ պարտէզի դուռը քո առջեւ չփակեն:

Նա իմ խոստմունքներից բաւական գոհ մնալուց յետոյ մի այլ խնդիրք եւս առաջարկեց:

— Ասա, որ մայրիկն էլ խելացի է, նրա առջեւ էլ դուռը չփակեն:

— Ո՞ր դուռը:

— Սենեակի դուռը: Հիմա այնտեղ է, դուռը փակած է: Ես այսօր ուզեցի, որ գնամ տեսնեմ, չկարողացա...

Վերջին խօսքերը այնպիսի զգացմունքով արտասանեց փոքրիկ երեխան, որ ինձ վրայ խիստ տխուր ազդեցութիւն գործեցին:

— Ինչո՞ւ են կողպում մայրիկին սենեակի մէջ:

— Չեմ իմանում: Մայրիկը այնտեղ աղաղակում է, լաց է լինում... ես էլ լաց եմ լինում, երբ մայրիկը լաց է լինում...

Երեխայի աչքերում արտասուք երեւաց:

— Հիմա այնտե՞ղ է մայրիկը:

— Այնտեղ է, ներսում, շատ ներսում... Հայրիկը չէ թողնում, որ դուրս գայ:

Այդ միջոցին երկու աղաւնիներ իջան, նստեցին սրահի վանդակապատի վրայ: Տեսնելով նրանց, փոքրիկը իսկոյն մոռացաւ այն ցաւը, որ զգում էր իր սիրելի մօր մասին: Նա խորամանկ կերպով նայեց իմ երեսին, աչքերը ծռմռեց եւ նշաններով հասկացրեց ինձ, որ սուս կենամ: Իսկ ինքը կուզէկուզ սկսեց մօտենալ թռչուններին: Նրանք աւելի զգոյշ գտնոեցան եւ, նկատելով փոքրիկ դարանակալին, թռան, բայց շատ հեռու չգնացին, նստեցին բակի մէջ, մի կտրած ծառի բունի վրայ: Մանուկը շարունակեց հետամուտ լինել, եւ մի քանի րոպէից յետոյ թէ աղաւնիները եւ թէ նա այլեւս չերեւացին: Ես խիստ սակաւ անգամ տեսել էի մի այնպիսի աշխոյժ եւ կայտառ երեխայ:

«Տան գաղտնիքը երեխայից հարցրու», ասում է յայտնի առածը: Հիմա ես աղօտ կերպով հասկանում էի, թէ ինչու չէր երեւում մեր տանտիկինը: Անտարակոյս մի պատճառ պէտք է լինէր, որ նրան թաքստի մէջ էին պահում: